


տատութեան միջոցաւ մի նոր շրջանի մէջ է մտնում, դրանով ձեւարանի ազդեցութիւնը մեր դպրոցական կեանքի վրայ աւելի է ընդլայնուում, նա իր հիմնական նպատակին աւելի է մօտենում և դիտական զբաղումները իր հոգացողութեան առարկան դարձնում:

Տիկին Քանանեանի այս նուիրաբերութիւնը ձեւարանին ըստ իր որակի անգնահատելի է. նա շատ ճիշտ է ըմբռնել, թէ ինչ եղանակով կարելի է մի խելացի և շօշափելի օգուտ տալ թէ մեր միակ բարձրագոյն դպրոց ձեւարանին և թէ հայ դպրոցական կեանքին առհասարակ: Տիկինը ճանաչողները հաւատացած են, որ մուգէյի հաստատութիւնից յետոյ էլ նա իր ուշադրութիւնը չի հեռացնի այդ հիմնարկութիւնից և հնարաւոր միջոցները ձեռք կառնէ նրան բարգաւաճ գրութեան մէջ պահելու համար:

Պ. Էդիկեան.



ԿԱՆՏԻ ԻՄԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

IV

Տրանսցենդենսալ էսեսիկա.

Տրանսցենդենտալ էստետիկայում¹⁾ Կանտը զուտ մատեմատիկայի փաստը վերցնելով իրրեւ քննդատութեան

1) Էստետիկա բառն ալոսեղ չի նշանակում զեղազիտութիւն. Կանտը վերցնում է այն հին յունական տառացի իմաստով, որ նշանակում է զգայաբանութիւն (զիտութիւն զգայութեան մասին): Իսկ տրանսցենդենտալ է անուանում իւր ռեսումնասիրութեան այդ մասը, որովհետեւ հետագոտում է՝ չունի՞ արդեօք զգայականութիւնը իր մէջ այնպիսի պայմաններ որոնք ճիմնաւորելին apriori սինտետիկ զիտութեանց հնարաւորութիւնը:

օրեկտ և խորհրդածելով ու գտնելով նրա գոյութեան համար *apriori* պայմաններ մեր բանականութեան մէջ՝ հիմնաքանու՞մ է այն։

Երեք մատեմատիկական գիտութիւն կայ՝ թուաբանութիւն, երկրաչափութիւն և մեքենագիտութիւն։

Երկրաչափութիւնը ուսումնասիրում է տարածութեան յատկութիւնները։ Որ նա սինտետիկ *apriori* գիտութիւն է և հիմնում է անմիջական ինդուկցիայի, այն էլ, պէտք է աւելացնել, տարածութեան վրայ՝ այդ տեսանքը։ Այժմ՝ պէտք է աւելացնել միայն, որ տարածութիւնն է նրա գոյութեան պայմանը, — եթէ վերջնենք տարածութեան ինդուկցիան երկրաչափութեան դատողութիւնների հիմքից, դրանով ոչնչացրած կլինինք նոյն ինքն երկրաչափութիւնը։

Թուաբանութիւնն զբաղւում է միութիւնների, թուերի յաջորդական կցորդմամբ և անջատմամբ, վերցւում է որոշ միութիւն—օր. 5, 5 կէտ և այդ միութեանը յաջորդաբար կցւում է մի այլ միութիւն, օր. 2 և ստացւում է մի այլ միութիւն՝ 7։ Յաջորդումը ժամանակի մէջ է լինում և նրա մոգուսն է, ուստի ժամանակը թուաբանութեան պայմանն է։

Մեխանիկայի օրեկտն է շարժումը, որը ոչ այլ ինչ է, բայց եթէ յաջորդական տեղափոխութիւն տարածութեան մէջ (եթէ ինկատի չառնենք տուեալ էմպիրիկ մարմինը, որը չի կարող *apriori* իմացութեան ենթարկուել)։ Ժամանակն (յաջորդականութիւնը) ու տարածութիւնը, որքեմն, մեխանիկայի գոյութեան պայմանն են։

Այսպիսով ժամանակն ու տարածութիւնը զուտ մատեմատիկայի հնարաւորութեան պայմանն են։ Ուրեմն մատեմատիկական դատողութիւններն այն ժամանակ օրեկտիւ և անհրաժեշտ նշանակութիւն կունենան, երբ նրանց հնարաւորութեան պայմանը կազմող ժամանակն ու տարածութիւնը իրօք լինին մեր բանականութեան *apriori* հայեցողութիւնները։

Զգայական հայեցողութեան զգայութիւնները, — ձայնը, գոյնը, կարծրութիւնը, տաքութիւնը, անթափանցութիւնը և լին. — կապուած են մասնակի զգայարաններից և օբեկտիւ նշանակութիւն չունին, այլ յեղյեղուկ են և ինդիվիդուալ. դրանք հայեցողութեան էմպիրիկ բովանդակութիւնն են կազմում, որոնց՝ իբրեւ այդպիսիների վրայ՝ չի կարող *a priori* գիտութիւն հիմնուել.

Սակայն, եթէ մեր զգայական հայեցողութիւնից վերացնենք (*абстрагировать*) բոլոր զգայութիւնները, այլ և բոլոր դատողական գաղափարները (կատեգորիաները), այնուամենայնիւ կմնան զգայական հայեցողութեան երկու զուտ ձեւերը՝ ժամանակն ու տարածութիւնը:

Առօրեայ սովորական մարդը կարծում է, թէ մենք տեսնում ենք ըմբռնութիւններ (իբրեւ) իրար վերաբերմամբ, աջ-ձախ, յետ-յառաջ, վեր-ցած, մօտ-հեռու, և դրանցից արտածում ենք ժամանակն ու տարածութիւնը, իբրեւ ընդհանուր գաղափարներ, որոնցով արտայայտում ենք այդ բոլորն ընդհանրապէս: Սակայն նա չի գիտակցում, որ սրտելով, թէ *ա-ն* *Բ-ից* յետ է կամ առաջ, աջ է կամ ձախ և լին... նշանակում է որոշադրել և ղետեղել դոցա տարածութեան մէջ, և որ դատաւորման այդ գործողութիւնն արդէն դրանով տրամաբանօրէն նախադրած է ունենում ընդհանուր ժամանակի և տարածութեան գաղափարը, իսկ աշուժիւնն ու ձախութիւնը, յետութիւնն ու առաջութիւնը և լին. հանդէս են գալիս որպէս ընդհանուր ժամանակի և տարածութեան մասնաւոր կիրառութիւնները, մոգուաները, արտայայտութիւնները: Այսպէս ուրեմն, անհնար է արտածել ժամանակն ու տարածութիւնը մասնակի ըմբռնութիւններից, իսկ այդ ոչ թէ այն պատճառով, որ ժամանակական և տարածական մասնակի ըմբռնութիւնների մէջ ընդհանուր նմանութիւններ չկան, ինչպէս կարծում է Չելլանովը¹⁾, այլ այն պատ-

1) Философія Канта (Міръ Божій) նաև введе́ніе въ философію.

ճառով՝ որ նոյն իրենք ըմբռնութիւնները հնարաւոր են ժամանակի և տարածութեան մէջ: Մենք կարող ենք վերացնել (абстрагировать) օրեկտից ձայնը, գոյնը, կարծրութիւնը և ինչ և անկախ պատկերացնել այն, ինչ դնում են այդ օրեկտի մէջ հայեցողութեան ձեւերը՝ ժամանակն ու տարածութիւնը, սակայն մենք չենք կարող վերացնել ժամանակն ու տարածութիւնը, օրեկտից, առանց դրանով վերացրած լինելու ամբողջ իրը, նրա գոյութեան պայմանը: Երբովհետեւ նա հնարաւոր է միմիայն ժամանակի և տարածութեան մէջ և նրանց շնորհիւ, — կարելի է ժամանակն ու տարածութիւնը մտածել (պատկերացնել առանց երեւոյթների,) բայց ոչ ընդհակառակն՝ երեւոյթներն առանց ժամանակի և տարածութեան: Հետեւեալը ժամանակն ու տարածութիւնը ոչ թէ արստրակտ արտածութիւններ են ըմբռնութիւններից, այլ նոյն հնարաւորութեան նախապայմանը, նախադրեալ, երկրորդ՝ նոքա ոչ թէ a posteriori արտածական հայեցողութիւններ են, այլ a priori և անհրաժեշտ:

Ոմանք կարծում են, թէ ժամանակն ու տարածութիւնը ընդհանուր սեռային գաղափարներ են և ոչ թէ եզական հայեցողութիւններ: Այդ սխալ է: Ընդհանուր սեռական գաղափարը կազմում է մասնակի օրեկտներից՝ արստրակցիայի ենթակելով նրանց ընդհանուր կողմերը, ուստի որքան շատ ընդհանուր լինի սեռային գաղափարը, այսինքն՝ որքան շատ իրերի նա վերաբերուի, այնքան, — ընդհանուր առմամբ, — աղքատ կլինի նա պարունակի կողմից, և ընդհակառակն՝ ինչքան քիչ իրերով սահմանափակուի տուեալ գաղափարը, այնքան ճոխ պարունակ կունենայ նա, եզակի իրը մաքսիմումն է տուեալ գաղափարի պարունակի ճոխութեան: Այն ճանապարհը, որով ընթանում է բանականութիւնը սեռային գաղափարը կազմելիս, դիսկուրսիւ է, այսինքն նա (բանականութիւնը) տուեալ պատկերացումները համեմատելով և դրոշմելով նմանութիւններ՝ զատում է այդ նման յատկանիշները և դրանցից սկսում է մի նոր գաղափար և վերա-

գրում՝ այդ պատկերացումներին, այդ պատճառով էլ մասնակի իրերը կարող են այնպիսի յատկանիշներ ունենալ, որ ընդհանուր գաղափարի մէջ չլինի. և երկրորդ՝ որը կարեւորն է, օրեկտն այստեղ չի պատկերացում՝ անմիջապէս այլ միջնորդապէս: Միտքն այդտեղ գործում է ընդհանուր օրէնքով, կամ, արտայայտած հակառակ՝ «հակասութեան օրէնքով» ուստի և դիսկուրսիւ գաղափարների շրջանում ֆորմալ տրամաբանութիւնն է գործ տեսնում: Ընդհանուր սեռային գաղափարի և մասնակի պատկերացումների յարաբերութիւնը ամբողջի և մասի յարաբերութիւնն է. տուեալ գիրք եղական իրը ընդհանուր «գիրք» գաղափարի ռէալ կտորը է. «գիրք» գաղափարի տակ հասկանում ենք նաև տուեալ եղական գիրքը, բայց այդ գիրքը «գիրք» գաղափարի մէջը է. նրա մասը չի կազմում:

Բոլորովին այլ ընդթ ունեն ժամանակի և տարածութեան պատկերացումները:—Մասնակի ժամանակները չեն կանխում ընդհանուր ժամանակին իբրև հիմքեր, որոնցից կազմւում են ընդհանուր ժամանակն ու տարածութիւնը դիսկուրսիւ եղանակով, ինչպէս սեռային գաղափարների մէջ էր. ընդհակառակն նրանք հնարաւոր են միայն շնորհիւ ընդհանուր ժամանակի և տարածութեան, որոնց սահմանափակւումով են ստացւում՝ մասնակիները և որոնց շնորհիւ միայն հնարաւոր են մասնակիները: Մասնակիների յատկանիշները ճոխ չեն ընդհանուրից, որովհետև ժամանակն ու տարածութիւնը մի միապաղաղ, իրենց բոլոր մասերում նոյնը մնացող մեծութիւններ են: Մասնակի ժամանակն ու տարածութիւնը ընդհանուրի ռէալ մասն են և գտնւում են նոյնց մէջ իբրև նրա կտորներ: Այստեղ մասի և ամբողջի յարաբերութիւնն է, իսկ ընդհանուր սեռային գաղափարների դէպքում՝ ընդհանուրի և մասնակիի:

Մասնակիներն ստացւում են իրենց հիմքում գտնուող մի ժամանակից և տարածութիւնից սահմանափակւումով, ուստի բոլոր մասերի հիմքը կազմող հիմնական ժամանակն

ու տարածութիւնը անսահման մեծութիւններ են և անչափելի, հակառակ դէպքում նրանք կլինին սահմանափակեալ մասն էլի անսահման ամբողջիւ Անսահման և անչափելի ժամանակն ու տարածութիւնը, այսպիսով, հանդիսանում են նախապայման մասնակի ժամանակակից և տարածական տարբերութեանց։ Այդ տարբերութիւնները ներկայացնում են կամ մասեր, կամ սահմաններ։ Կէտը և մոմենտը (առաջինը տարածութեան, երկրորդը՝ ժամանակի) ոչ թէ մասեր են, այլ սահմաններ։ Երկու կէտի միջև եղած տարածութիւնը կամ երկու մոմենտի միջև հոսած ժամանակը մասեր են կամ մեծութիւններ և անհունօրէն բաժանելի են, այլապէս նրանք չէին լինի մասն կամ մեծութիւն։

Ժամանակական և տարածական տարբերութիւնները հիմնուած չեն հակասութեան օրէնքի վրայ։ Մենք մեր աջ ձեռքը տարբերում ենք ձախից, որը բոլորովին նոյն յատկանիշներն ունի, իրը՝ նրան կատարելապէս նման նրա արտացոլումից, աջ ականջը նոյն նկարագիրն ունեցող ձախ ականջից ևլն. ոչ թէ տրամաբանական ապերաջիաների շնորհիւ, ոչ թէ գաղափարների վերլուծութեանց և նրանց անալիտիկ առընչութիւնը գիտակցելու շնորհիւ, այլ միմիայն անմիջական հայեցողութեանց՝ ժամանակի և տարածութեան շնորհիւ, որովհետեւ չկայ ոչ մի տարածական տարբերութիւն, որ իր հերթին միմիայն տարածական չլինէր. նոյնը վերաբերում է նաև ժամանակին։ Այդպիսի հայեցողութիւն կայ միմիայն երկու հատ (գոնէ մարդկանցս համար)՝ ժամանակ և տարածութիւն, այն էլ մէկ ժամանակ և մէկ տարածութիւն։ Բոլոր երևոյթներն իրարից տարբերելի են ժամանակի և տարածութեան շնորհիւ.—նրանք կարող են ապրել միևնոյն ժամանակում, բայց տարբեր տեղերում, կամ միևնոյն տեղում, բայց տարբեր ժամանակներում։ Այսպիսով ժամանակն ու տարածութիւնը ներկայանում են որպէս principium indiscernibilium.

Այս խորհրդածութիւններն ապացուցում են, որ ժա-

մանակն ու տարածութիւնը ոչ թէ գիտութիւն գաղափարներ են, այլ հայեցողութիւններ, և որովհետեւ ապացուցինք նաեւ նրանց ապրիորի լինելը, ուրեմն ժամանակն ու տարածութիւնը զուտ կամ *apriori* հայեցողութիւններ են:

Մատեմատիկան իբրեւ *apriori* սինտետիկ հայեցողական գիտութիւն սենի լիակատար արժէք և օրեկտիւ նշանակութիւն ու ճշմարտութիւն, որովհետեւ նրա հիմքը կազմող ժամանակն ու տարածութիւնը իբրեւ *apriori* զուտ հայեցողութիւններ յատուկ են մարդկային բանականութեան գործունէութեանը: Մատեմատիկան հիմնուած է ինդուկցիայի օրինակարգեալ ակտի վրայ: Ժամանակի և տարածութեան ինդուկտիւթիւնը հիմնաքանուած են մատեմատիկայի հայեցողական և սինտետիկ լինելը, իսկ *apriori*ութիւնը՝ նրա անհրաժեշտութիւնն ու ճշմարտութիւնը: Իսկ որ մատեմատիկան գործադրելի է փորձի իրերի վերաբերմամբ՝ բացատրուում է նրանով, որ ժամանակն ու տարածութիւնը երեւոյթների (ըմբռնութեանց) հնարաւորութեան *apriori* պայմանն են:

Ոչ մի գաղափար չէր կարող բացատրել և հասկանալի կացուցանել փոփոխութեան հնարաւորութիւնը, եթէ մենք չունենայինք յաջորդականութեան ինդուկցիա (ժամանակ), որի շնորհիւ միայն մենք կարող ենք անմիջականօրէն պատկերացնել փոփոխութիւնը: մենք չէինք կարող տրամաբանական վերլուծութեանց շնորհիւ հասկանալ, թէ ինչպէս միևնոյն ենթակային զանազան ուտորգելիներ են կապուում: Փոփոխութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի և նոյն սուբեկտի զանազան վիճակների անընդհատ յաջորդական շարքը ժամանակի մէջ: Եթէ այդ վիճակների յաջորդմանց մէջ չկայ անցումն, չկան օղակող վիճակներ, այդ դէպքում փոփոխութիւնը անընդհատ չէր լինի, նա անընդհատ կլինէր այն դէպքում, երբ ոչ մի բոլոր չգաղափարէր, իսկ այդ անընդհատութեան պատճառը գտնուում է ժամանակի մէջ: Այսպիսով ժամանակը ոչ միայն փոփոխութեան, այլև անընդհատականութեան պայմանն է: